

Համաձայնագիր
«Թրիոդոս Ֆասեթ» և «Բի Էս Սի» ընկերությունների
բացառիկ համագործակցության մասին

Հոլանդական «Թրիոդոս Ֆասեթ» ընկերությունը (նախկինում ՖԱՍԵԹ) արդեն երկար տարիներ է, ինչ համագործակցում է «Բի Էս Սի» ընկերության հետ:

Նախկինում, «Թրիոդոս Ֆասեթ»-ը խորհրդատվական ընկերություն էր, որը շուրջ 15 տարի առաջ իրականացրել է TACIS ընկերության շրջանակներում ֆինանսավորվող նախագծեր /ծրագրեր/, որոնք էլ հիմք հանդիսացան «Բի Էս Սի» ընկերության հիմնադրման համար: Այս տարիների ընթացքում մենք պահպանել ենք աշխատանքային հարաբերություններ, որի արդյունքում, համատեղ ուժերով, իրականացվել են մի շարք նախագծեր մատակարարման շղթայի զարգացման և Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվության ոլորտներում:

«Թրիոդոս Ֆասեթ»-ը համաշխարհային խորհրդատվական ընկերություն է, որը մասնագիտացած է մասնավոր հատվածի զարգացման բնագավառում` փոքր և միկրո ձեռնարկությունների նկատմամբ հատուկ կողմնորոշմամբ: Մենք հավատում ենք, որ ձեռներեցները (փոքր բիզնեսի) շատ որոշիչ և նշանակալի դեր են խաղում տեղական տնտեսության զարգացման վրա, և հետևաբար, պետք է հնարավորություն ունենան գործել բիզնեսի կանոնակարգված միջավայրում, և վստահաբար, պետք է հասանելիություն ունենան ֆինանսական և ոչ ֆինանսական ծառայություններին: Մասնավոր հատվածում փոքր բիզնեսի զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր իրականացնելիս մենք վստահեցնում ենք, որ երկարաժամկետ արդյունքների հասնելու միակ պայմանը, սոցիալական և ֆինանսական ոլորտներում, «կայունություն» սկզբունքի վրա շարունակական կենտրոնացումն է:

Հաշվի առնելով «Բի Էս Սի»-ի կողմից մատուցվող ծառայությունները, ինչպես նաև վերջինիս ղեկավարության հետ ունեցած քննարկումները, պարզ է դառնում, որ «Բի Էս Սի» ընկերությունը կիսում է մեր առաքելությունն ու շահերը: Ինչպես «Թրիոդոս Ֆասեթ»-ը, «Բի Էս Սի» ընկերությունը ևս մասնավոր հատվածին մատուցում է մասնագիտական ուսուցման և խորհրդատվական ծառայություններ, որի նպատակն է խթանել անհատական և տնտեսական զարգացումը: Հիմնվելով մեր ընդհանուր նպատակների և հետաքրքրությունների վրա` մենք որոշել ենք համագործակցել առավել համակարգային հիմքերի վրա, և ստորագրել ենք «Փոխըմբռնման Համաձայնագիր», որում մենք հանգել ենք Հայաստանում գործելու բացառիկ փոխադարձ համաձայնության:

Փոխըմբռնման այս համաձայնագրի շնորհիվ «Բի Էս Սի»-ի համար հասանելի է դառնում «Թրիոդոս Ֆասեթ»-ի և վերջինիս միջոցով, ընկերության հիմնական բաժնետեր «Թրիոդոս Բանկ»-ի փորձը և նորամուծությունները: «Թրիոդոս Բանկ»-ը սոցիալական պատասխանատվություն կրող

ներդրող է և ունի իր ամուր դիրքն այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են՝ միկրո ֆինանսական ինստիտուտների և վերականգնվող էներգիային վերաբերող նախագծերի ֆինանսավորումը:

«Թրիոդոս Ֆասեթ»-ը, «Բի Էս Սի»-ի հետ կփոխանակի իր միջազգային փորձը և արդյունքները ֆինանսական հատվածի (հատկապես միկրոֆինանսավորում և մանր ու միջին ձեռնարկությունների ֆինանսավորում), ձեռնարկատիրության զարգացման (բիզնես ինկուբացիա և ուսուցողական մեթոդոլոգիայի զարգացում) և բիզնեսի զարգացմանն ուղղված ծառայությունների ոլորտներում:

Հայտնի է, որ «Բի Էս Սի»-ն Հայաստանի Հանրապետության մասնավոր հատվածի համար դարձել է հայտնի և հուսալի գործընկեր, և Հայաստանի առանձնահատկությունների ու մասնագիտական ծառայությունների մատուցման վերաբերյալ խորը գիտելիքներ ունենալով՝ մենք ակնկալում ենք, որ մեր համագործակցությունը, երկու ընկերությունների համար էլ, կուղեկցվի բիզնեսի և շուկայի ծավալների ընդլայնմամբ:

Իմ առաջին այցը Երևան, որն անցյալ շաբաթ էր, շատ ոգևորիչ էր: Մենք աշխատեցինք մեր ներքին համակարգերի և շուկայական գործընթացների հստակեցմանն ուղղությամբ: Այնուհետև, մեր նոր ձեռնարկումների մասին տեղեկացնելու և «Բի Էս Սի» ընկերության կողմից մատուցվող մի շարք ծառայությունների ընդլայնումը ներկայացնելու նպատակով մենք համատեղ այցելեցինք մի շարք հեռանկարային հաճախորդներին:

Ես տպավորված էի Երևան քաղաքի զարգացվածության մակարդակով և հմայված էի այն միջավայրով ու մարդկանցով, որոնց ես հանդիպեցի: Պետք է խոստովանեմ, որ այս այցի ժամանակ բոլորովին ժամանակ չունեցա քաղաքից դուրս գնալ, այն պարագայում, երբ ակնկալում էի տեսնել շրջաններ, որտեղ դեռ հսկայական աշխատանքներ կան իրականացնելու, որոնք ուղղված են Հայաստանում աճող տնտեսական ռեսուրսների նկատմամբ հասանելիության ապահովմանը, այդ թվում գյուղացիների համար: Այս խնդիրը մարտահրավեր է մեզ համար, որին ընդառաջ էլ կցանկանայինք ընթանալ «Բի Էս Սի»-ի հետ համատեղ ուժերով:

Մենք մեծ ակնկալիքներ ունենք մեր արդեն հստակեցված համագործակցությունից և հավատացած ենք, որ ակտիվ կլինենք Հայաստանում շատ մոտ ապագայում: Մեր մասին առավել մանրամասն տեղեկատվության համար խնդրում եմ կապ պահպանել ինձ կամ պարոն Սամվել Գևորգյանի հետ:

Ադրիան Լյուֆ, գործադիր տնօրեն, «Թրիոդոս Ֆասեթ» ՍՊԸ, Բյուննիկ, Հոլանդիա:

Տես՝ www.triodosfacet.nl

www.triodos.nl